


ընդ որում եւ սրբոցն դասուց տաւնա-
խըմբութիւնք» (21) :

Հ. ՔԵՐՈՐԵՅ Վ. ԶՐԱՔԵԱՆ,

(21) Անանուն բայց ընտիր ճառս շատ կը տար-
բերի Նիկողիմոսի, Մ. Սորենացւոյ, Եպիփանի,
Դիոնիսիոս Արիստակազացւոյ եւ Զաքարիա Կաթո-
ղիկոսի մեղի ծանօթ ճառերէն... Պարադաներն՝



ՏԻՐԱՄԱՅՐՆ ու ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԱՐԶՄԱՆ ՊԱՀՈՒՆ
Սաղմոսարան Կոստանդնուպոլիսի. գրչ. տարի 1629. Զեռագր. Հաւաքածոյ Ս. Ղազարու, Թ. 1238.

L'ASCENSION de N. S. J. CH.
Livre des psaumes. an 1629. Collection des manuscrits arméniens de St. Lazare, N° 1238.

յէական Մ. Սորենացւոյ առ Սահակ Արծրունի
գրած թուղթին, կամ Հոգեաց վանքի պատմու-
թեան համաձայն են, բայց նորանոր յաւելում-
ներով չափազանցուած երբեմն: ... Ճառիս հե-
ղինակը հայազգի մէկն ըլլալու է, Հոգեաց վանքի
տիրամօր պատկերին վրայ պատմական եւ տե-
ղագրական տեղեկութիւններ տալուն համար: Վե-
րափոխման Շարականէն եւս երկու տեղիք մէջ
բերուած են հոս՝ բառացի կերպով...: Լեզուին եւ
ոճին եւ մանրամասն տեղեկութեանց համար շատ
ուշադրաւ: (Սարգս. Յուլ. էջ 750-1):

ՄԵՐ ՆԱԽՆԵԱՑ ՀԱՒԱՏՔԸ

ՏԻՐԱՄՈՐ ԱՆԱՐԱՏ ՅԱՌԻՔԵԱՆ ՄԱՍԻՆ

Աստուածաբանական ամփոփ ներկայա-
ցում մը թող կազմեն այս տողերը, հիմ-
նուած՝ քրիստոնէական վարդապետու-
թեան եւ մասնաւորապէս մեր Հայ Եկե-
ղեցւոյ Ծիսարանին եւ Հայրերու աւան-
դութեան վրայ, ամբողջացնելու համար
անարատ Կուսամօր չքնաղ պատկերը՝
Մայիսեան այս Բացառիկի էջերուն մէջ:

ՍԿՋԲՆԱԿԱՆ ՄԵՂԻՔԸ

Քրիստոնէական յայտնութիւնը կ'ու-
սուցանէ որ Աստուած երբ ստեղծեց առա-
ջին մարդն ու կինը՝ զանոնք չթողուց
իրենց բնական կարգին մէջ, այլ օժտեց
զանոնք գերբնական եւ արտաքոյ բնու-
թեան ձրի պարզեւներով: Գերբնական
(surnaturel) պարզեւներն էին սրբարար
շնորհքը, հեղեալ առաքինութիւնները եւ
Ս. Հոգւոյն պարզեւները. ասոնցմով
մարդը իր բնական վիճակէն բարձրացած՝
հաղորդակից եղաւ աստուածային կեան-
քին, դարձաւ որդեգիր Աստուծոյ: Արտա-
բոյ բնութեան (préternaturel) պարզեւնե-
րով ալ Արարիչը կամեցաւ զարգարել ա-
ռաջին մարդը, ընձեռելով անոր՝ զիտու-
թեան եւ անմահութեան, ինչպէս նաեւ
ցանկութենէ եւ ցաւերէ զերծ ըլլալու ա-
ռանձնաշնորհութիւնները:

Այս երջանիկ վիճակը կը կոչուի սկըզ-
բնական արդարութիւն:

Այս բոլորը տրուած էին Ադամին՝ իր-
եւս գլուխ մարդկային սեռին ու պիտի
փոխանցուէին բնականօրէն սերունդէ սե-
րունդ, այսինքն՝ Ադամի բոլոր զաւակնե-
րունդ, այսինքն՝ Ադամի բոլոր զաւակնե-
րունդ ալ պիտի տրուէին այդ շնորհքները:
Բայց դժբախտաբար առաջին մարդը չը-
զիտցաւ ու չկրցաւ յարգել այս բոլորը եւ

իր ազատութիւնը չարին գործածեց, ու
չհնազանդելով Աստուծոյ մէկ պատուի-
րանին, մեղանչեց: Ատով դարձաւ թշնամի
Աստուծոյ, զրկուեցաւ գերբնական ու
արտաքոյ բնութեան պարզեւներէն, վը-
որնտուեցաւ նաեւ երկրաւոր դրախտէն:

Այս է սկզբնական մեղքը Ադամի մէջ:

Յաջորդաբար մարդկային բոլոր ազգն
ալ, որ սերունդ է Ադամի, կը ծնի զրկը-
ւած այն սկզբնական արդարութենէն եւ
անոր առանձնաշնորհութիւններէն: Այս
դժբախտ զրկումը Ադամի զաւակներուն
մէջ կը ստեղծէ իսկապէս մեղապարտ վի-
ճակ մը, քանի որ մարդս կը դնէ Աստուծոյ
կամքին ընդդիմադարձ կացութեան մը
մէջ. վասնզի Աստուած, Ադամի մեղքէն
վերջ չէ փոխած իր ծրագիրը, որուն հա-
մաձայն՝ ամէն Ադամորդի պիտի ծնէր
սկզբնական արդարութեան պարզեւնե-
րով: Ուստի նորածին մանուկը, Ադամէն
Ժառանգած յանցապարտ զրկանքով՝ ան-
հաճոյ կը դառնայ Աստուծոյ, ու մեղա-
պարտ՝ ո'չ իր անձնական կամ ներգործա-
կան մէկ մեղքով, այլ՝ նոյն իր այդ վի-
ճակով, զերի սատանայի եւ զրկուած ար-
քայութիւն մտնելու իրաւունքէն:

Այս է սկզբնական մեղքը Ադամի որդի-
ներուն մէջ(1):

(1) Սկզբնական մեղքի վարդապետութիւնը Ս. Եկե-
ղեցին սկիզբէն ի վեր դաւանած է: Տե՛ս այս մասին
P. Martin Jugie, A. A. « L'immaculée Concep-
tion dans l'Ecriture Sainte et dans la Tradi-
tion Orientale (Romae, 1952. pg. 489), pg. 25-38:
Մեր հայ Եկեղեցին ալ կ'ընդունի նոյնը. Մանգակունի,
Նարեկացի եւ Տաթևացի յատուկօրէն կը յեղյեղեն սկըզ-
բնական մեղքի ճշգրիտ գաղափարը:

Քրիստոս իր չարչարանքներով արժանացաւ մաքրել մարդկութիւնը այս համայնաշինչ արատէն ու զայն բարձրացնել իր նախկին արդարութեան: Մկրտութեան սուրբ խորհուրդը, Յիսուսի փրկաւորութեան զօրութեամբ կը ջնջէ սկզբնական մեղքը, կը վերնծայէ դերբնական պարզեաները, ու նորածին մանուկը կ'ընէ որդեգիր Աստուծոյ, բարեկամ եւ հաղորդակից աստուածային կեանքին ու ժառանգ երկնքի արքայութեան: Այս է վերանորոգեալ արդարութիւնը: Մկրտութեամբ չեն վերադարձուիր միայն արտա-տաքոյ բնութեան պարզեաները, այսինքն՝ դիտութեան եւ անմահութեան, ցաւերէ եւ ցանկութենէ՝ դերծ մնալու առանձնա-չնորհութիւնները: սակայն այս պարզեաներէն զրկուած ըլլալը՝ այնուհետեւ չունի պատժական հանգամանք, այլ կը նկատուի լոկ բացակայութիւն մը յիշեալ պարզեաներուն, բացակայութիւն մը առժամայ. վասնզի վերջին դատաստանէն ու յարութենէն յետոյ պիտի վերադարձուին առաւելօքն:

Ս. ԿՈՅՍԻՆ ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀՈՒԹԻՒՆԸ

«Միայնդ ամենագիւտ ի համայնաշինչ կորստեան» կը գոչէ Հ. Ալիշան(2), Տիրամօր ուղղութեամբ արթնելու մէջ: Իրօք, կրնա՞ր ըլլալ որ Ս. Աստուածամայրն ալ ենթարկուէր սկզբնական մեղքի անէծքին, ու ինքն ալ վարակուէր այդ ժանտախտէն, ինք՝ որ սահմանուած էր տաճարն ըլլալու Աստուծոյ. կարելի՞ է միթէ խորհիլ որ Աստուծոյ ապագայ մայրը՝ վայրկեան մ'իսկ գերի մնացած ըլլայ սատանային, եւ թշնամի ու ատելի՝ Աստուծոյ աչքին: Սուրբ Եկեղեցին կ'ուսուցանէ որ ինչպէս Ադամն ու Եւան բացառիկ վիճակ մը ունեցան աշխարհի ստեղծագործութեան պահուն, այսպէս նաեւ նոր Ադամն ու նոր

Եւան, այսինքն՝ Քրիստոս եւ Տիրամայրը յայտնուեցան դերազանց շնորհներով՝ իրազործելու համար աշխարհի երկրորդ ստեղծագործութիւնը, փրկագործութիւնը: Եւ Ս. Կոյսը իբրեւ ապագայ Աստուածամայր՝ դերծ մնաց սկզբնական մեղքէն եւ անոր հետեւանքներէն: Այս բացառիկ շնորհքը կատարուեցաւ յղութեան վայրկեանին, Ս. Կոյսին մօր՝ Աննայի որովայնին մէջ: Իբրեւ Ադամի դաւակ՝ Տիրամայրն ալ ենթակայ էր սկզբնական մեղքին. բայց աստուածային միջամտութիւնը՝ ի տես Քրիստոսի ապագայ փրկաւորութեան չարչարանքներուն եւ անսահման արժանիքներուն՝ կասեցուց յորդհոսան հեղեղը մեղքի: Բացառութիւն մը, ի պատիւ ապագայ աստուածամայրութեան: Եւ ահա՛ Քրիստոսի փրկաւորութեան կանխահապ պտուղը. իր անարատ մայրը, ամբիժ՝ ինչպէս արուսեակն երկնքի, իբրեւ անաղօտ արուսեակը քրիստոնէական նորաստեղծ երկնքին:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՆՎՈՒԹԻՒՆԸ

Տիրամօր անարատ յղութիւնը, այսպէս բացատրուած, իբր հաւատքի ճշմարտութիւն հրատարակուեցաւ 1854-ի Դեկտ. 8-ին Պիոս Թ. Սրբոյ. Քահանայապետին կողմէ: Բայց չկարծուի թէ այդ օրը նոր դաւանանք մը պարտադրուեցաւ, հաւատալիք մը որ անծանօթ մնացած էր դարերէ ի վեր: Ս. Եկեղեցւոյ մէջ այս տեսակ յեղաշրջութիւն չի կրնար տեղի ունենալ. ան չ'ընդունիր նոր յայտնութիւններ. սակայն օրէ օր աւելի կը լուսարանէ Ս. Գրքի եւ աւանդութեան իմաստները, որոնք իր հաւատքին դանձարանք կը կազմեն: Այսպէս, դաւանական խնդիրներու անդրադոյն ուսումնասիրութեամբ, շատ մը հարցեր որ հիներու քով աղօտ էին, հետզհետէ լուսարանուեցան ու պայծառացան դարերու ընթացքին:

Այս տեսակ հարցերէն է նաեւ Տիրամօր Անարատ Յղութիւնը, ըստ վկայութեան

բոլոր աստուածաբաններուն, որոնց կը ձայնակցի նաեւ Գերալ. Եղուարդ Հիւրմիւղեան(3): Առաջին դարերէն սկսելով, յաջորդաբար լուսարանուած են ու քարոզուած՝ Տիրամօր մշտնջենաւոր կուսութիւնը, աստուածամայրութիւնը, դերազանց սրբութիւնը, անարատութիւնը նաեւ թեթեւ մեղքերէ ու ցանկութենէ: ԺԲ. դարուն էր որ Արեւմուտքի մէջ բացայայտուէր զրուեցաւ Ս. Կոյսին սկզբնական մեղքէ դերծ ըլլալու հարցը. այնուհետեւ ուսումնասիրութիւնները տեւեցին շուրջ Եօթը դար(4). մինչեւ որ հարցը մտաւ իր վճիտ սահմանումին մէջ, ընդունելի աւանդէն եւ հաւատալի իբր Աստուծոյ մէջնային ճշմարտութիւն Ս. Գրքի եւ Եկեղեցական աւանդութեան մէջ:

Հին հաւատքն էր որ նոր բանաձեւով մը յստակօրէն կը ներկայանար:

ԲԱՆԱՁՆԻՒՐ

Տիրամօր անարատ յղութիւնը կարելի է բանաձեւել դրական եղանակով. օրինակ՝ Տիրամայրը անարատ յղացած է Աննայէն, Տիրամայրը իր յղութեան առաջին իսկ վայրկեանէն շնորհքի վիճակին մէջ ապրած է միշտ, Տիրամայրը նման է Եւայի՝ մեղքէն առաջ: Միեւնոյն ճշմարտութիւնը կարելի է նաեւ ներկայացնել ժխտական եղանակով. օրինակ՝ Աստուածամայրը Աննայէն յղացած է առանց սկզբնական մեղքի, Տիրամայրը դերծ մընացած է սկզբնական մեղքի ամէն արատէ: Դարձեալ կարելի է բանաձեւել բացայայտ եղանակով, ինչպէս են վերի օրինակները՝ իրենց դրական կամ ժխտական ձեւերուն մէջ: Կարելի է նաեւ բանաձեւել

լոկալաբար. օրինակ՝ Տիրամայրը ամենասուրբն է բոլոր արարածներուն մէջ, աւելի սուրբ է քան երկնքի սերորէներն ու քերորէները, Տիրամօր միշտորդութեամբ մարդկութիւնը Աստուծոյ հետ հաշտուած է եւ սկզբնական մեղքը ջնջուած, Մարիամ ամենասուրբն է, միշտ սուրբ, միշտ անարատ՝ անապական... եւն... (5):

Նկատելի է սակայն որ այս վերջին կարգի բանաձեւերէն չէ կարելի պարտադրականօրէն հետեւցնել թէ հեղինակը մեր ներկայացուցած մտքով դրած ըլլայ այդ տողերը. կրնան ատենը Տիրամօր անմեղանշականութեան, դերազանց սրբութեան եւ հրաշալի կուսութեան փառաբանութիւնը լոկ ըլլալ: Հարկ է հարցը մանրամասնել:

Ս. ՀԱՅՐԵՐՈՒ ԱԿՆԱՐԿՆԵՐԸ

«Ս. Հայրերու բովանդակ շրջանին, ինչպէս նաեւ յաջորդող ժամանակամիջոցին մինչեւ ԺԶ. դար — կ'ըսէ Երոզմանի հեղինակաւոր աստուածաբան մը — Անարատ յղութեան վարդապետութիւնը ոչ մէկ հակաճառութեան առարկայ եղած է: Այս հարցը ուղղակի չէ դրուած, ինչպէս ընդհակառակն կատարուած է արեւմուտքի մէջ ԺԲ. դարէն առդին: Ահա՛ թէ ինչո՞ւ արեւելիները աւելի դրական բանաձեւերով կը փառաբանեն Ս. Կոյսը, քան ժխտականներով: Կը զմայլին Տիրամօր դերազանց սրբութեամբ (պահանջ աստուածամայրութեան), եւ կը շուրջեն սքանչելի բացատրութիւններ: Պատահաբար է միայն որ Ս. Կոյսէն կ'ուզեն տարածել սկզբնական արատը եւ անոր հետեւանքները: Նոյնիսկ աստուածամայ-

(3) Աստուածաբանութիւն տեսական. վ. Ենեմի, Ս. Ղազար, 1862. Հտ. Բ. էջ 174-5.

(4) Անարատ յղութեան մասին արեւմուտքի մէջ տեղի ունեցած աստուածաբանական վեճերուն եւ լուսարանութեան նկատմամբ՝ մանրամասնօրէն տես D. de Théologie Cath. tome VII. pg. 979-1218.

(5) Բանաձեւերու այս զանազանութիւնները ի յառաջագունէ եւ մտացածին չեն, այլ արդիւնք են եկեղեցական կայսրութեան՝ յոյն շարականներու մէջնային եւ արեւելի հեղինակներու երկերէն հանուած անթիւ վկայութիւններու դասաւորման, զոր մանրամասնօրէն կատարած է P. M. Jugie, վերոյիշեալ երկին մէջ, էջ 38-40.

(2) Աղօթք Արեւայի. վ. Ե. Ս. Ղազար, 1876, էջ 22.

ինչպէս ակնարկեցինք, յոյներու քով մեկնաբանուած էր 2. դարէն սկսեալ Նազիանզացիի մէկ մուծ արտայայտութիւնը:

Թէ առարկայապէս, սակայն, ի՞նչ իմաստ ունի այդ մաքրազարդումը մեր հայոց քով, պիտի տեսնենք քիչ յետոյ:

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

Դժուարին է Նարեկացիի երկերէն ընտրանքով քաղել Տիրամօր անարատութեան դրուատիքի տողերը, վասնզի անթիւ ևն եւ իրարմէ սքանչելի: Ինք է և կը մնայ մեր Եկեղեցւոյ մէջ գերագոյն երգիչը Տիրամօր, որ կանգնած Ժ. դարու սեմին, կը կանխէ լատին Եկեղեցւոյ մեծամեծ աստուածաբանները, ինչպէս Անսելմոս, Բենեդիկտոս եւ Ալպէր, եւ կարծես լրումն է յոյն աւանդութեան: Ահա՛ էական կէտերը:

1. — «Հրեշտակ ի մարդկանէ, մարմնատեսիլ փերովքէ... անխառն իբրեւ զօդ, մաքուր որպէս լոյս, անշաղախ ըստ նմանութեան արուեսկին բարձրութեան, գերազանց քան զբնականութիւն անկոխելի սրբութեանց... անաղտ մաքրութիւն... անարատ սրբութիւն»(11):

2. — «Ի խորոց ծովէ աշխարհի շուշանական շաւոօք ամբարձար, եւ իբր ի դրժնեայ փշոց խտութեանց յաշխարհիս զբաղմանց ծաղկեցար, եւ իբր ի դառն արմատոց երկրի փաղցրաբաշակ պտուղ յայտնեցար»(12):

3. — «Ի մարդկային գարմէ՝ հրեշտակ երկնային, յեղծականաց սեռիցս՝ անմահ սերովքէ, ի հողային նիւթոյ՝ ոսկի Սոփերայ, ի ծովային բերմանց՝ շնորհալոյս մարգարիտ, ի յեսսեանն բուսոյ՝ փաղցրապտուղ ծաղիկ, ի յաւուրց նախնեաց՝ նիւօրհնութեան»(13):

4. — «Մեղուցելոյ կնոջն առաջնոյ առնց յանցանայ զաւակ գովեցար»(14):

5. — «Նախ քան զծնանիլ Բանին առ ի քէն անբերի լրականութեամբ հրեշտական քեռոցն սօղմամբ ցանգ արկեալ պահէիր անաղտ ամբօութեամբ: Առ որ հանեալ հաւանութեամբ երրորդական փառք աստուածութեանն, քանապարհ արար հանգստեան...»(15):

6. — «Եւ առաւել քեզ պարտական եմք երկրպագութեամբ ունել շնորհ, Տիրամայր, որ Աստուծոյ ի ծառայի կերպարան ստեղծման եղեր պատմառ»(16):

7. — «Որ ի դրութեմէ խառնութեան քառից յեղանակեալ տարերաց՝ անկցորդ մնացեր ի մասնէ հողածնելոցս հասարակաց. ոչ բերող ծանրութեան բնակակիր համաստեղծս կարեաց, այլ փերովքէօրէն հրաբերան բղխող նշուլից: Ուստի երազ ընթացիւք հետոց հեռացեալ՝ ի վայրն անմատոյց յարմին վերին ընծայեցար»(17):

8. — «Սլացեալ հասեր ի բարձունս երկնից, իբր անընդունակ ապականութեան եւ մահու լուծման՝ մարմին, յորմէ պատկառեաց ամօթով պարտիքն մահու, եւ ցուցար բնակիչ արժանապատիւ կենդանեաց երկրին»(18):

Այս բոլորէն կ'եզրակացնենք թէ, Նարեկացիին համաձայն, Տիրամայրը յայտնուած է միշտ անաղտ ամբօութեամբ, հրեշտակային անարատութեամբ, եւ այս՝ նախ քան իր աստուածամայրութիւնը. մանաւանդ թէ, արժանացած է աստուածամայրութեան՝ իր անարատութեամբ: Տիրամայրը անմեղ զաւակն է՝ մեղապարտ առաջին կնոջ. այս հակադրութիւնը չի՞ ակնարկէր արդեօք այն կատարեալ անարատութեան, որով Ս. Կոյսը զերծ մնաց սկզբնական մեղքէն: Արդարեւ օրհնութեան ճիւղն է մարդկային սերունդին



ԹԻՅԻԱՆՈՅ. — Ս. Աստուածածնի վերափոխումը (Վենետիկ, Աի Ֆրարի):
TIZIANO. — L'Assomption de la Sainte Vierge (Venise, Ai Frari).

(11) Նարեկ, բան 2, վ. 50. Ս. Ղազար, 1840, էջ 213.

(12) Գուգարի խմբից. տպ. անդ, էջ 416.

(13) Ա. Եղ, էջ 414. (14) Ա. Եղ, էջ 416.

(15) Ա. Եղ, էջ 409. (16) Ա. Եղ, էջ 414.

(17) Ա. Եղ, էջ 411.

(18) Ա. Եղ (Տաղ՝ Գերազանց լափոյ), էջ 420.



Տ. Ա. ԳԱԶԱՆԺԵԱՆ. - «Արդի Տիրամայրը» և Յիսուս Մանուկ
D. A. KAZANDJIAN. - «La Madone moderne» et l'Enfant Jésus.

մէջ, միշտ անհաղորդ կիրքերու եւ դժնէ ցանկութեանց: Ձերձ է նաեւ մահուան ապականութենէն եւ անընդունակ ատոր, որովհետեւ չունի իր մէջ մահուան եւ ապականութեան սերմը, որ կու գայ սկզբնական մեղքէն. ահա թէ ինչո՞ւ մահուան իշխանը ամօթով պատկառեցաւ Տիրամօր մօտենալէ, ու Ս. Կոյսը վերափոխեցաւ երկինք, ըստ Նարեկացիի:

Այս բոլորէն վերջ մենք չենք զարմանար երբ Նարեկացիի քով գտնենք նաեւ «հանգստեամբ Հոգւոյն հանդերձեալ եւ մաքրագործեալ» (19) բացատրութիւնը, որ անշուշտ կը մնայ նախորդ տողերուն հետ ներդաշնակ դժի մը վրայ, եթէ այդ մաքրագործումը հասկնանք՝ իբր շնորհի նորանոր յաւելում մը, իբր մերձաւորագոյն պատրաստութիւն մարդեղութեան անճառ խորհուրդին, նման յոյն հեղինակներու բացատրութեան Յովհ. Դամասկացիէն ի վեր: Չէ՞ որ Աստուածամայր ըլլալէն առաջ՝ Ս. Կոյսը միշտ անաղտ ամբողջութեամբ պահպանուած էր, ըստ Նարեկացիին: Աւելի ուշ պիտի տեսնենք նաեւ թէ ինչ իմաստով մեկնարանուած է այդ մաքրագործեալը՝ հեղինակաւոր հայ աստուածաբաններու մօտ:

ՇՆՈՐՀԱԼԻ ԵՒ ԻԳՆԱՏԻՈՍ ՎՐԴ.

ԺԲ. դարուն Տիրամօր բացառիկ անարատութեան, կամ աւելի ճիշտ՝ ցանկութենէ եւ այլ կիրքերէ զերձ ըլլալու մասին ազատ դադարաւորներ կը յայտնուին չայ եկեղեցւոյ մէջ: Շնորհալի եւ Իգնատիոս վրդ. Ս. Կոյսին մէջ կը դնեն մաքրագործում մը, որ տեղի ունեցած է Աւետման օրը Ս. Հոգւոյն եկաւորութեամբ. ու մաքրագործում ըսելով՝ կը հասկնան ձերբազատում մը ցանկութենէ

եւ բոլոր ուրիշ կիրքերէ, թէեւ կ'ընդունին որ Տիրամայրը նախապէս ալ բոլորովին անմեղ էր եւ արդար: Ահա՛ Շնորհալիին տողերը.

1. — «Հոգին... մաքրեաց զկոյսն յամենայն մարմնական կրից» (20):

2. — «Ձի եթէ Յովհաննէս ի փոքր մի մերձաւորութենէն այնքան մաքրեցաւ, զի՞նչ է ասել զմեզնէ՝ որ բովանդակ ըզբնութիւնն Աստուծոյ իննամետայ ժամական կրեաց յորովայնի մարմնով. ոչ միայն թէ յախտաբիժ ցանկութեանց, այլ եւ բովանդակ հարկաւոր կարեաց՝ հաւատարիմ է՝ արտաքին լինել մա յայնմեռեալ» (21):

3. — «Հանելի էր իմոց մտաց ընտրութեան եթէ համարձակէի ասել՝ ոչ միայն գայն մարմին որ միացաւ ընդ Բանին, այլ եւ զկուսին սրբոյ յետ անմատելի յղութեան արտաքին դնել այստեղի կրից՝ որպէս բոլորիցն այստաւոր շարժմանց որք ըստ հոգւոյ եւ ըստ մտաց» (22):

Ինչպէս կը նշմարուի, Շնորհալին շատ համեստ է իր հաւաստումներուն մէջ. «հաւատարիմ է» այսինքն՝ արժան է հաւատալ, «հանելի էր... եթէ համարձակէի ասել» բացատրութիւնները կը մատնանը՝ չեն թէ ինք իր կողմէ կը ջանայ աստուածաբանական նկատողութիւններ կատարել, որոնք անշուշտ պիտի չմերժուին ուրիշներէ. կարծես կ'ուզէ հաւատալիքի եզր մը գծել, այսինքն՝ հաւատալ որ գոնէ Աւետումէն սկսած Ս. Կոյսը զերձ էր ցանկութենէ:

Աւելի յայտնարարաւ է Իգնատիոս վրդ. ի կարծիքը այս մաքրագործումին մասին:

«Յառաջէ գայ (Հոգին) ի Կոյսն եւ սրբէ զմա յամենայն մարմնական ցանկութեան»

(19) Նարեկ, բան 2. էջ 218.

(20) Մեկնութիւն Ս. Աւետարանին որ ըստ Մատթեոսի (Մտթ. Ա. 18). Կ. Պոլիս, 1825, էջ 31.

(21) Անդ, էջ 37.

(22) Թուրքառ Յակոբ Ասորի. յԸնդհանրական բողոքս,

Երուսաղէմ, 1871, էջ 239. Շնորհալիի յիշեալ 3 հաւաստումներուն լատիներէն թարգմանութիւնը տես յՕրբերաց, Վենետիկ - Ս. Վազար, 1833, Հտ. Ա. էջ 90-91, Հտ. Բ. էջ 53, 62-63.

3. — «Սրբուհի կոյսն ի կէտ յղացման՝ արտաբնաց գծանկն սկզբնական մեղաց» (36) :

4. — «Ամենասուրբ ասէ (Նարեկացին), քանզի ազատ էր նա ի սկզբնական եւ ի ներգործական մեղաց: ... Ուստի երեք եւ չորս սրբութիւնք ի մայր Տեառն: Առաջինն՝ սրբութիւնը յարգանքի մօրն, որ ունէր այս երեք ներգործութիւնս. գմաքութիւնը յսկզբնական մեղաց, գիեղումն շնորհաց եւ զկապումն արմատոյ մեղաց: Երկրորդ սրբութիւնն էր ի հովանաւորութենէ Հոգւոյն սրբոյ եւ ի յղութենէ Որդւոյն Աստուծոյ որ ի վերայ երկից վերագրելոց յաւել եւս երկու. այսինքն՝ բզիջումն արմատոյ ցանկութեան եւ գիստաւորութիւնն առ բարին: Երրորդ սրբութիւնն եղեւ ի բնակութենէ Որդւոյն Աստուծոյ... նաեւ այնքան սրբութեան ժամանեաց սրբուհի կոյսն, մինչ զի զկնի Աստուծոյ ոչ ոք կարաց նմա հաւասարիլ սրբութեամբ եւ մաքրութեամբ: Զի զկնի առաջնոյ ամենասրբոյն Աստուծոյ, նա եղեւ երկրորդ սուրբն եւ ամենասուրբն» (37)

Նալեանով՝ մեր Հայ եկեղեցին ալ, անշուշտ ազդեցութեամբ արեւմտեան աստուածաբաններու պատճառարանութեանց, կը հասնի Տիրամօր Անարատ Յղութեան յատկ զազաւարին: Տիրամայրը դերձ է սկզբնական մեղքէն եւ ցանկութենէն՝ իր յղութեան առաջին վայրկեանէն ի վեր, Աննայի ծոցին մէջ: Աւետման օրը, Հոգւոյն սրբոյ եկաւորութեամբ, ոչ թէ մաքրութեամբ մեղքերէ, այլ եւս աւելի հաստատութեամբ շնորհքի մէջ, ու բոլորովին մարեցաւ իր մէջ ցանկութեան արմատը:

Նկատելու է որ Նալեան պատրիարք այս մեկնութեամբ կը ջանայ պարզաբանել Նարեկացիի տողերը. նոյնիսկ մաքրագործեալ կամ մաքրեալ բացատրու-

թիւնները կը հասկնայ իրր շնորհքի յաւելումներ(38). ու այս իմաստները կը վերադրէ նոյն ինքն Նարեկացիին:

Ուրեմն, սխալած չենք ըլլար, երբ կ'ըսենք թէ Նարեկացիի քով իսկ առատօրէն կան Տիրամօր անարատ յղութիւնը մատնանշող դրական լուծեայն բանաձեւեր, որոնց մեկնութեան ընթացքին՝ Նալեան պատրիարք առանց վարանելու կու տայ ժխտական բացայայտ բանաձեւերը, զորս թուեցինք քիչ վերը:

Հետեւաբար մենք այսօր, այս անդրադոյն իմաստով կրնանք մեկնել մեր շարականներուն մէջ զտնուած մաքրագործեալ եւ անոր համարժէք բանաձեւերը, իրաւացիօրէն քարելով մեր աստուածաբանութեան յատկացեալ հեղինակներուն հետ:

Ահա՛ թէ ինչպէս աստուածաբանական այս հարցը դարեւր ընթացքին հետզհետէ լուսաբանուած է նաեւ մեր Հայ եկեղեցւոյ մէջ. Նարեկացիով արդէն զազաւթ մը գլորաւած ենք, ունեցած ենք երեւելներ, բայց Վարդան վրդ.ով եւ Նալեանով արդէն իսկ գտած ենք կատարեալ իմաստն ու արժէքը:

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Նալեանէն քիչ վերջ, բայց Պապական (1854-ի) վճիռէն շատ առաջ, կարգ մը Մխիթարեան աստուածաբաններ ու հեղինակներ եւս կ'ընդունին ու յայտնի կերպով կը պաշտպանեն Տիրամօր անարատ յղութիւնը Աննայէն, ըլլա՛յ առանձին ճառերով, ըլլա՛յ մեկնութիւններով. չեն վարանիր այս վարդապետութեան լուծեայն բանաձեւը գտնել Նարեկացիի քով, ինչպէս նաեւ կարգ մը շարականներու մէջ. կու տան մինչեւ իսկ աստուածաբանական յատկանիշը այս հարցին, այն է բարեպաշտօրէն հաւատալի. այսպէս Զամ-

չեան(39), Աւետիքեան(40) ու Աւդերեան(41): Վերջինս իր Աստուածաբանութիւն դաստական (ձեռագիր) ընդարձակ երկին Ե. համարին մէջ առանձին գլուխ մը կ'ընծայէ այս հարցին, ու փակելէ առաջ, խորհրդածելով Վարդան վրդ.ի «Անքառամ ծաղիկ»ի մեկնութեան վրայ, կ'եզրակացնէ. «յորում ժամանակի դասապետք լատինաց դասական աստուածաբանութեան յուզելին ի կարծիս պէտքէն վասն առաջիկայ խնդրոյս, վարդապետք հայոց անտարակուսելի համարելին զիրսն՝ քեւտարք կոյսն էր անարատ յղացեալ, զի եւստի կոյսն էր անարատ յղացեալ» (42)

Նոյն ուղղութեամբ եւ աւելի յստակօրէն, թէեւ ամփոփ ձեւերով, 1854-ի վրէժն, թէեւ ամփոփ ձեւերով, 1854-ի վրէժն վերջ, Հիւրմուրդի եւ Սարեանի մեղքի ընդհանրականութեան մասին տրամաբանութեան դասընթացքներուն մէջ(43):

1850-ի ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԸ

Ներսէս Ե. Առաքարեկեցիի կաթողիկոսութեան օրով, եւ նոյն ինքն կաթողիկոսէն պաշտօնապէս վաւերացուած Քրիստոնէականի մը մէջ (1850), սկզբնական մեղքի ընդհանրականութեան մասին տրամաբանութեան մը պահուն՝ կը ուսած բացատրութեան մը պահուն՝ կը յայտարարուի Ս. Կոյսին անկէ դերձ ըլլալը. կը յայտարարուի նաեւ որ այս կարծիքը համապատասխան է Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանանքին: Ահա՛ Քրիստոնէականի խօսքերով.

ՀՐՑ. Մի՛թէ միայն այնքան յանգամից

(39) Պատկեր տօնից Ս. Աստուածածնի. տպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1805, Հոն կայ ճառ մը (մինչեւ էջ 51) նուիրուած Ս. Կոյսին Անարատ Յղութեան:

(40) Բացի վերեւ յիշատակուած տեղերէն, տե՛ս նաեւ Նարեկուն (Բ. տպ.). Վենետիկ, Ս. Ղազար, 1827, Հոն. Բ. էջ 91, 100: Մեկնութիւն ԺԴ. քրդոց եր. Պօղոսի Առաքելոյ. Վենետիկ, Ս. Ղազար, 1806, Հոն. Ա. էջ 149:

(41) Լրոշմն լիակատար վարդգ եւ վկայաբանութեանց սրբոց Վենետիկ, Ս. Ղազար. 1814, Հոն. ԺԱ. Հոն սրբոց Վենետիկ (էջ 1-31) նուիրուած Ս. Կոյսին կան երկու ճառեր (էջ 1-31) նուիրուած Ս. Կոյսին

դատապարտութիւն եղեւ յամենայն մարդիկ:

ՊՏՄԽ. Այո՛...: Ուստի եւ ոչ ոք անշաղախ ի նորա մեղացն ծնեալ է, եւ ոչ իսկ ոք ծնանի: Եւ իսկոյն կ'աւելցնէ ծանօթութեան մէջ. Իմա՛ բաց յայնցանէ՛ գորս առանձին շնորհիւ կամեցաւ Աստուած պահել, որպէս զԱստուածածնէն քարոզէ Հայաստանեայց եկեղեցի յերգս Շարականին. * Բանաւոր երկիր տիրուհի եւ անդաստան մաքուր ի փշոց մեղաց: * Անքառամ ծաղիկ, անդատապարտ շառաւիղ...: Եւ Նարեկացին ասէ. * Երանեալ ես դու ի լեզուս անքիծս ընտրական շնորհաց ծաղիկդ. Յեսեայ պտղոյն մեր կենաց. որ ի դրութենէ խառնութեան քառից յեղանակեալ տարեաց՝ անկցորդ մնացեր ի մասնէ հողածնելոցս հասարակաց, ոչ բերող ծանրութեան բնակակից, համաստեղծս կարեաց (ի ներքող. Աստուածածնի) (43ա):

Յայտնի է ուրեմն որ 1854-ի Պապական որոշողութենէն իսկ առաջ, մեր Հայ եկեղեցին, իր երկու յարանուանութեանց մէջ ալ կը դաւանէր Տիրամօր Անարատ Յղութիւնը, հիմնուած իր շարականներուն եւ Նարեկացիի զմայլելի բացատրութիւններուն վրայ:

ԱՐԴԻ ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետրոս քհնյ. Գասարճեան 1945-ին հրատարակեց (Փարիզ) «Հայ Առաքելական եկեղեցին եւ իր վարդապետութիւնը»

Անարատ Յղութեան:

(42) Գիշան Ս. Ղազարոս, Արկղ Աւդերեանի:

(43) Աստուածաբանութեան տեսական. (Հար. Բ.).

Վենետիկ, Ս. Ղազար, 1862, էջ 174-177, Ընթացք տեսական աստուածաբանութեան. Վենետիկ, Ս. Ղազար, 1894, էջ 642-644:

(43ա) ՀՐԱՀԱՆԳ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՅ ըստ ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց, ընդարձակեալ համապատասխան վկայութեամբ. աշխատասիրութեամբ Մսերայ վարժապետի Գրիգորեան. Զմիւռնացւոյ, Մոսկուս, 1850, էջ 81-82:

(36) Ուր, էջ 837.

(37) Ուր, էջ 804. Հմմտ. նաեւ էջ 958.

(38) Ուր, էջ 813.

